ԲՄԿ ՊՈՒՀ ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ) ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հաստատում եմ՝
Իրավունքի Ինստիտուտի
տնօրեն
Մ. Ա. Քալաշյան

« 04 » հուլիսի 2025 թ

Ինստիտուտ՝ Իրավունքի
Ամբիոն՝ Քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական դատավարության իրավունքի Առևտրային գործունեության իրավական կարգավորումը և մարդու իրավունքները

Հեղինակ՝ իր. գ. թ., դասախոս Գյանջումյան Եվգենյա Էդուարդի

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Դասընթաց՝ Առևտրային գործունեության իրավական կարգավորումը և մարդու իրավունքները

Մագիստրոսի կրթական ծրագիր՝ 042101.05.7 «Գործարարական իրավունք»

Դասիչ մասնագիտություն՝042101.00.7 «Իրավագիտություն»

Դասընթացի անոտացիան

Ձեռնարկատիրական իրավունքը կարգավորում է ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող սուբյեկտների ընդհանուր բնութագիրը, ձեռնարկատիրական գործունեության իրականացման ընդհանուր պայմանները, ձեռնարկատիրական ոլորտում կնքվող հիմնական պայմանագրերը և առհասարակ ձեռնարկատիրական գործունեությունն ուղեկցող պայմանները:

Դասընթացի նպատակը և խնդիրները

Դասընթացի **նպատակն է** ուսանողների մոտ ձևավորել համակարգված և խորացված գիտելիքներ ձեռնարկատիրական գործունեության իրավական կարգավորման վերաբերյալ, զարգացնել իրավական վերլուծության կարողություններ և ապահովել իրավունքի կիրառման հմտություններ բիզնես ոլորտում՝ հաշվի առնելով ինչպես ազգային օրենսդրությունը, այնպես էլ միջազգային իրավական ստանդարտները:

Դասընթացի շրջանակներում լուծվում են հետևյալ **խնդիրները**.

- ուսումնասիրել ձեռնարկատիրական իրավունքի աղբյուրները և համակարգը,
- վերլուծել ձեռնարկատիրական գործունեության սուբյեկտների իրավական կարգավիճակը,
- ուսումնասիրել առևտրային կազմակերպությունների ստեղծման, գործունեության և լուծարման իրավական հիմքերը,
- բացահայտել պայմանագրային հարաբերությունների առանձնահատկությունները ձեռնարկատիրական ոլորտում,
- ուսումնասիրել մրցակցության իրավունքի և հակամենաշնորհային կարգավորման հիմքերը,
- վերլուծել ձեռնարկատիրական գործունեության պետական վերահսկողության և կարգավորման մեխանիզմները,

- ուսումնասիրել ձեռնարկատիրական գործունեության ընթացքում մարդու իրավունքների պաշտպանության խնդիրները,
- զարգացնել իրավական խնդիրների լուծման և դատական պրակտիկայի կիրառման հմտությունները,
- ձևավորել իրավական մտածողություն և ինքնուրույն որոշումների ընդունման կարողություն։

Դասընթացի օբյեկտը և առարկան

Սույն դասընթացի ուսումնասիրության օբյեկտ են հանդիսանում ձեռնարկատիրական ոլորտում ծագող իրավահարաբերությունները և ձեռնարկատիրական գործունեության ընթացքում մարդու իրավունքների պաշտպանությունը։

Նույն դասընթացի առարկան է ձեռնարկատիրական իրավունքի գիտության ուսումնասիրությունների արդյունքների, մշակած տեսական դրույթների, կատեգորիաների, հիմնավորումների հիմքով ձեռնարկատիրական իրավունքի էության, առանձնահատկությունների, ձեռնարկատիրական իրավահարաբերությունների կարգավորման կառուցակարգերի, ձեռնարկատիրական իրավահարաբերությունները կարգավորող նորմատիվ ակտերի դերի ու նշանակության պարզաբանում, ինչպես նաև իրավաստեղծ և իրավակիրառ գործունեության ուսումնասիրություն։

Դասընթացի մուտքային պահանջները

Դասընթացի շրջանակներում, առավել արդյունավետ կրթական վերջնարդյունքների ձևավորման համար, ուսանողներին անհրաժեշտ են բազային գիտելիքներ իրավագիտությունից, պետության և իրավունքի տեսությունից, ինչպես նաև հարակից մի շարք այլ իրավունքի ճյուղեր ուսումնասիրող առարկաներից։

Դասընթացի յուրացման արդյունքում ձեռք բերվող գիտելիքները և կարողությունները

Դասընթացի յուրացման արդյունքը ապահովում է անհրաժեշտ գիտելիքների, հմտությունների ու կարողությունների համապատասխան ՈԱՇ-ի վերջնարդյունքներին։

Գիտելիքները՝

- Կարող է սահմանել ձեռնարկատիրական հիմնական հասկացությունները, կազմակերպական սկզբունքները,
- Կարող է նկարագրել ձեռնարկատիրական ոլորտն ընդգրկող իրավական և նորմատիվային դաշտը,
- Կարող է ճանաչել գործարարին որպես իրավունքի առանձին սուբյեկտ որակելու առանձնահատկությունները՝ սահմանելով տեսական հիմնական հասկացությունները,
- Կարող է ներկայացնել առանձին առևտրային ընկերություն ստեղծելու դրական և բացասական կողմերը՝ ուրվագծելով հնարավոր հետևանքները:

Հմտությունները՝

- ***գիտելիքի կիրառման հմտությունները՝***
- Կարող է վերլուծել գործարար միջավայրը, դրա վրա ազդող հիմնական գործոնները, ձևավորման նախադրյալները՝ բացահայտելով արդի խնդիրները,
- Կարող է նշել ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու հիմնական հատկանիշները և ռիսկերը,
- Կարող է վերլուծել և մշակել ձեռնարակատիրության բնագավառին վերաբերող պայմանագրերը՝ մատնանշելով կատարված փոփոխությունները, ինչպես նաև մեկնաբանել դրանց վերաբերելիությունը:

- ***ընդհանրական իմացական հմտությունները՝***
- Կարող է ապահովել տեսական ու գործնական գիտելիքների արդյունավետ կիրառություն,
- Կարող է վերլուծել խնդրահարույց իրավիճակները,
- Կարող է արդյունավետ հաղորդակցվել ոլորտում առկա խնդիրների շուրջ,
- Կարող է կազմակերպել ուսումնասիրվող թեմաների վերաբերյալ քննարկում:

Կարողունակությունը (կոմպետենցիան)՝

- ***ինքնուրույնությունը և պատասխանատվությունը՝***
- Ունակ է ինքնուրույն յուրացնել նորմատիվ իրավական ակտերը, դատականշպրակտիկան և պետական մարմինների բացատրական նյութերը,
- Ունակ է վերլուծել ձեռնարկատիրական իրավունքի աղբյուրներ հանդիսացող նորմատիվ իրավական ակտերը,
- Ունակ է կատարել ձեռնարկատիրական գործունեություն ոլորտում տարբեր իրավական երևույթների համեմատական վերլուծություն,
- Ունակ է աշխատել ձեռնարկատիրական գործունեություն ոլորտում շրջանառվող իրավական փաստաթղթերի հետ:

Դասավանդման եղանակները և մեթոդները

Դասախոսության և սեմինար պարապմունքների միջոցով:

Դասընթացի տեղն ուսումնական ծրագրում

Դասընթացը ներառված է ***«Ձեռնարկատիրական իրավունքի և մարդու իրավունքների իրավական կարգավորումը»՝*** **4 ակադեմիական կրեդիտ** (**32 ակադեմիական ժամ**) աշխատատարությամբ, որից **16 ակադեմիական ժամ** նախատեսվում է գործնական պարապմունքների համար: Դասընթացը նախատեսվում է ուսումնասիրել 1-րդ ուսումնական տարվա 2 կիսամյակում:

Ուսումնական աշխատանքի տեսակները	**Ընդամենը, ակադ. ժամեր**
1. Առարկայի ուսումնասիրման ընդհանուր աշխատատարությունն, այդ թվում՝	**144**
1.1. Լսարանային պարապմունքներ, այդ թվում՝	**32**
1.1.1. Դասախոսություններ	**16**

1.1.2.Գործնական պարապմունքներ, այդ թվում՝	**16**
1.1.2.1. Ստուգողական աշխատանքներ	
1.2. Ինքնուրույն աշխատանք, այդ թվում՝	**112**
1.2.1. Քննություններին նախապատրաստում	-
1.2.2. Ինքնուրույն աշխատանքի այլ տեսակներ, այդ թվում՝(նշել)	-
1.2.2.1.Գրավոր ինքնուրույն աշխատանքներ	-
1.2.2.2.Էսսե և ռեֆերատներ	-
Ամփոփիչ ստուգում (քննություն, ստուգարք)	**քննություն**

Դասընթացի ծավալի բաշխում (ակադեմիական ժամերով) ըստ թեմաների և ուսումնական աշխատանքի տեսակների

Առարկայի բաժինները և թեմաները	**Ընդամենը**	**Դասախոսու-թյուններ**	**Գործնական / սեմինար պարապմունքներ**
1	**2=3+4**	**3**	**4**
Թեմա 1. Ձեռնարկատիրական իրավունքի դերը շուկայական հարաբերություններում՝ մարդու իրավունքների պաշտպանության համատեքստում	4	2	2
Թեմա 2. Ձեռնարկատիրական հարաբրությունների սուբյեկտները	2	1	1
Թեմա 3. Քաղաքացիների մասնակցությունը ձեռնարկատիրական հարաբերություններում	4	2	2
Թեմա 4. Իրավաբանական անձինք Ձեռնարկատի ական հարաբերություններում, ձեռնարկատիրական հարաբերություններին մասնակցող	2	1	1

իրավաբանական անձանց կազմակերպաիրավական ձևերը			
Թեմա 5.Ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող սուբյեկտների սնանկացումը	4	2	2
Թեմա 6. Ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող սուբյեկտների գույքի կարգավիճակը	2	1	1
Թեմա 7. Ձեռնարկատիրական գործունեության պետական կառավարումը	4	2	2
Թեմա 8. Պայմանագրի դերը ձեռնարկատիրական հարաբերություններում	2	1	1
Թեմա 9 Ձեռնարկատիրական գործունեության ֆինանսավորման և վարկավորման իրավական կարգավորումը	2	1	1
Թեմա 10. Արտաքին տնտեսական գործունեություն	2	1	1
Թեմա 11. Արտաքին տնտեսական գործունեության նկատմամբ պետական վերահսկողություն	2	1	1
Թեմա 12. Օտարերկրյա ներդրումներ	2	1	1
	32	**16**	**16**

Թեմա 1. Ձեռնարկատիրական իրավունքի դերը շուկայական հարաբերություններում՝ մարդու իրավունքների պաշտպանության համատեքստում

1. Ձեռնարկատիրական իրավունքի հասկացությունը

2. Ձեռնարկատիրական իրավունքի կարավորման առարկան
3. Ձեռնարկատիրական գործունեության հատկանիշները
4. Մարդու իրավունքների պաշտպանությունը ձեռնարկատիրական ոլորտում

Թեմա 2. Ձեռնարկատիրական հարաբերությունների սուբյեկտները

1. Ձեռնարկատիրական հարաբերության սուբյեկնտերի ընդհանուր բնութագիրը
2. Ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող սուբյեկտների հատկանիշները

Թեմա 3. Քաղաքացիների մասնակցությունը Ձեռնարկատիրական հարաբերություններում

1. Քաղաքացիների մասնացությունը ձեռնարկատիրական հարաբերություններին
2. Քաղաքացիների մասնակցության պայմաններն ու կարգը

Թեմա 4. Իրավաբանական անձինք ձեռնարկատիրական հարաբերություններում, Ձեռնարկատիրական հարաբերություններին մասնակցող իրավաբանական անձանց կազմակերպաիրավական ձևերը

1. Իրավաբանական անձանց կազմակերպաիրավական ձևերը
2. Իրավաբանական անձանց մասնակցությունը ձեռնարկատիրական հարաբերություններին
3. Ապրանքային բորսաներ
4. Ֆոնդային բորսաներ

Թեմա 5. Ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող սուբյեկտների սնանկացումը

1. Սնանկության ինստիտուտի հասկացությունը

2. Սնանկության ընթացակարգերը
3. Սնանկության պարզեցված ընթացակարգ
4. Բանկերի և վարկային կազմակերպությունների սնանկությունը

Թեմա 6. Ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող սուբյեկտների գույքի կարգավիճակը

1. Գործարարին պատկանող գույքի իրավական կարգավիճակը
2. Հիմնական մջոցների իրավական կարավիճակը
3. Շրջանառու միջոցների իրավական կարգավիճակը

Թեմա 7. Ձեռնարկատիրական գործունեության պետական կառավարումը

1. Պետական կառավարման հասկացությունը
2. Պետական կառավարման սկզբունքները
3. Պետական կառավարման միջոցներն ու մեթոդները

Թեմա 8. Պայմանագրի դերը ձեռնարկատիրական հարաբերություններում

1. Պայմանագրի հասկացությունն ու նշանակությունը Ձեռնարկատիրական հարաբերություններում
2. Պայմանագրի կնքման, կատռարման և դադարման կարգը Ձեռնարկատիրական հարաբերություններում
3. Պայմանագրի կնքման եղանակները Ձեռնարկատիրական հարաբերություններում

Թեմա 9. Ձեռնարկատիրական գործունեության ֆինանսավորման եվ վարկավորման իրավական կարգավորումը

1. Ձեռնարկատիրական գործունեության ֆինանսավորումը
2. Ձեռնարկատիրական գործունեության վարկավորումը
3. Սուբսիդիաները և սուբվենցիաները Ձեռնարկատիրական գործունեության իրականացման ընթացքում

Թեմա 10. Արտաքին տնտեսական գործունեություն

1. Արտաքին տնտեսական գործունեության հասկացությունը
2. Արտաքին տնտեսական գործունեության ձևերը

Թեմա 11. Արտաքին տնտեսական գործունեության նկատմամբ պետական վերահսկողություն

1. Պետական վերահսկողության ձևերը
2. Պետական վերահսկողության մեխանիզմները

Թեմա 12. Օտարերկրյա ներդրումներ

1. Օտարերկրյան ներդրումների հասկացությունն ու դերը ձեռնարկատիրական հարաբերություններում
2. Օտարերկրյա ներդրումների կատարման կարգը

Դասընթացի ապահովվածությունը գրականությամբ

Նորմատիվ իրավական ակտեր

1. ՀՀ Սահմանադրություն
2. ՀՀ քաղաքացիական օրենսգիրք
3. «Սնանկության մասին» ՀՀ օրենք
4. Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին ՀՀ օրենք
5. «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենք
6. «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենք
7. «Ապրանքային բորսաների մասին» ՀՀ օրենք
8. «Արժեթղթերի շուկայի մասին»» ՀՀ օրենք

Գրականության ցանկ

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք: Առաջին մաս. (երրորդ հրատարակություն) Երևան, ԵՊՀ հրատ., 2006, 560 էջ, ISBN 5-8084-0793-1,

2. Բարսեղյան Տ., Գործարարական իրավունք: Դասագիրք բուհերի համար: Երևան, ԵՊՀ կրատ., 2009, 347 էջ, ISBN 978-58084-1125-8:
3. Մուրադյան Ս.Վ. ՀՀ ձեռնարկատիրական (բիզնես) իրավունք, Երևան, ԼԻՄՈՒՇ հրատ., 2010, 220 էջ:
4. Абросимова, Е. А. Организаторы торгового оборота : учебник для вузов /Е. А. Абросимова. — 2-е изд., перераб. и доп. — Москва : Издательство Юрайт, 2025. — 183 с. — (Высшее образование). — ISBN 978-5-9916-8144-5.
5. Белов, В. А. Торговое (коммерческое) право: литературная энциклопедия. Книга 1. До первого свода законов российской империи (1832 г.) : учебник для вузов / В. А. Белов. — Москва : Издательство Юрайт, 2025. — 422 с. — (Высшее образование). — ISBN 978-5-534-13129-1.
6. Ансон В. Договорное право (пер. с английского О.Н. Садиков). М., изд. «Юридическая литература», 1984,
7. Белых С.В. Свобода предпринимательской деятельности как конституционно-правовая категория в Росийской Федерации. СПб, изд. «Юриидический центр пресс», 2005
8. Гражданское и торговое право зарубежных стран. Учебник. Под. ред. В.К. Пугинского, В.В. Безбаха. М., «МЦФЮР», 2004
9. Международное коммерческое право : учебник для вузов / В. Ф. Попондопуло [идр.] ; под общей редакцией В. Ф. Попондопуло. — 5-е изд., перераб. и доп. — Москва : Издательство Юрайт, 2024. — 415 с.